

ՓԱՍՏԱՔԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

31.10.2017 11:58

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի նախագծով նախատեսված փաստաբանի նկատմամբ դատարանի կողմից, որպես դատական սանկցիա տուգանքի կիրառումն անթույլատրելի է համարում:

ՀՀ Սահմանադրության 64-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ իրավաբանական օգնություն ապահովելու նպատակով երաշխավորվում է անկախության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության վրա հիմնված փաստաբանության գործունեությունը: Փաստաբանների կարգավիճակը, իրավունքները և պարտականությունները սահմանվում են օրենքով:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ «Փաստաբանի մասնագիտական գործունեության ազատության մասին» 25.10.2000թ. №Rec(2000)21 հանձնարարականի 1-ին սկզբունքի 1-ին կետի համաձայն՝ հարկավոր է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները, որպեսզի հարգվի, պաշտպանվի և խթանվի փաստաբանի մասնագիտական գործունեության ազատությունը առանց խտրականության և իշխանությունների կամ հասարակության կողմից անիրավաչափ միջամտության, հատկապես Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի համապատասխան դրույթների լույսի ներքո:

Նույն սկզբունքի 4-րդ կետի համաձայն՝ փաստաբանները չպետք է տուժեն հետևանքներից կամ ենթարկվեն ցանկացած պատժամիջոցների կամ ճնշումների վտանգի, երբ գործում են իրենց մասնագիտական չափանիշներին համապատասխան:

ՄԱԿ-ի կողմից 1990թ. ընդունված «Փաստաբանների դերին վերաբերող հիմնարար սկզբունքներ»-ի 16-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ կառավարություններն ապահովում են, որպեսզի փաստաբանները կարողանան իրենց մասնագիտական բոլոր պարտականությունները կատարել սպառնալիքներից, խոչընդոտներից, ահաբեկումից կամ անարդարացի միջամտությունից զերծ մթնոլորտում:

Փաստաբանի նկատմամբ դատարանի ներգործության միջոցն այսօր ունի միջնորդավորված բնույթ և իրավական հետևանք կարող է առաջացնել միայն այն դեպքում, երբ ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդն է փաստաբանի վարքագծում խախտում տեսնում:

Գործող նշված իրավակարգավորումը փաստաբանի լավագույն երաշխիքն է դատարանի հնարավոր անհիմն ներգործության միջոցներից պաշտպանվելու համար:

Օրենսդրական այս նախաձեռնության հիմքում հավանաբար դրված է այն պատճառը, որ ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդը շատ դեպքերում կարճում է դատական սանկցիայի հիմքով փաստաբանների նկատմամբ հարուցված կարգապահական վարույթները: Կարճման ելքով ավարտված շատ վարույթներով ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդն արձանագրել է դատավորների չհիմնավորված մոտեցումները փաստաբանների նկատմամբ: Եղել են դեպքեր, երբ ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդը դիմել է պատկան մարմնին դատավորի վարքագիծը քննարկելու համար:

Այս պայմաններում, գործող իրավակարգավորումը շատ լավ գտիչ է հանդիսանում է փաստաբանական համայնքի և դատական համակարգի հարաբերություններում, հետևաբար դրա փոփոխությունը (դատարանին՝ փաստաբանի նկատմամբ տուգանք նշանակելու անմիջական ներգործության միջոց կիրառելու լիազորությունը տալը) կարող է վնասել փաստաբանի անկախությանը:

ՀՀ դատական օրենսգրքի նախագծի վերոհիշյալ և այլ կարգավորումների կապակցությամբ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը կներկայացնի իր դիտողությունները և առաջարկությունները՝ փաստաբանների կարծիքները ստանալուց հետո:

Հայաստանի Հանրապետության

փաստաբանների պալատի

Նախագահ՝ Արա Զոհրաբյան

Վերադառնալ \$(window).load(function(){ if(typeof \$(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt(\$(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } }